

(Լեւոն պուր)։ Այդ թիւը չափ կը բարձրանար, եթէ Զրանսիայի ազգաբնակչութիւնը արագ աճէր։ Բայց Զրանսիան ուրիշ երկիրներէ նման չէ տառու։ Կա միակ երկիրն է Եւրոպայում որը բնակչիւնքի թիւը համարեա մշտական է մնում։ Միւշդիւն Անգլիայի բնակչիւնքի թիւը կրնա պատկերում է, դժկոտը մարդիկ հաշիւներով, 53 տարւում, Պորտուգալիոյ 64, Ալպանիայի 93, Իտալիայի 100 տարւում, Զրանսիայից կրնա պատկերում է միմիայն 300 տա-
րում։ Այդ հանգամանքը նաեւ մի պատճառ է Զրան-
սիայի հարստութեան, որովհետեւ որքան բնակչութիւ-
նը աճէ, այնքան էլ հարստութիւնը ավելի բաժանիլի
հաւասար մասերի օրէնքի համեմատ։ (Անգլիայում
ժառանգալիս օրէնքները ուրիշ են, այնտեղ հօր մեծ
որդին ունի անկէ զեր իրաւունքներ ժառանգու-
թեան համար)։ Բայց Փրանսիայից որի այդ ընդհան-
րագէտ աճող հարստութիւնը նաեւ ներգործում է
իրանց դրութիւնը բարեգելու, աւելի ճոխ ապրելու
և այդ է նաեւ պատճառը որ նա իր երկրային ար-
դեւարեութեամբ չէ բաւականանում, այլ միշտ
պակասորը ուրիշ երկիրներից լրացնում է։ Զրան-
սիա մտնող ցորենը դալիս է ըստ մեկի մասին
Ռուսաստանից։ Մարտիլի նաւաւաւաւորտով, բայց
այս վերջին ժամանակներ ամերիկացիները մեծ
մրցողութիւն են անում կրկին իրանց արժանու-
թեամբ, այնպէս որ նոյն իսկ իրանց Փրանսիական
երկրագործները վախենում են այդ մրցողութիւնից
և այս տարի մեծ ժողովներ կազմային կառավա-
րութիւնից պահանջելու, որ արտահանման ցորենի
համար մեծ մարս դնեն, ինչպէս առաջ, որը մի
տնտեսութեան տարր է, որ բարձած է և՛ հարկէ, խե-
ղացի մարդիկ այդ մարքանքի հակառակ են որով-
հետեւ մարքը միշտ թանկացնում է ապրանքը, իսկ

Եւ յիշատակ, այս վերջի ժամանակը հէնց իսկ այն օրից, երբ մի մարդ, միայն մի հատ մարդ զփրկ հեռագրաւ քաղաքական ասպարէզից, կարծես այն օրից հայերի շուրջը դադարեց, լեզուն ցամաքեց, եւանդը խեղդվեց և ընդհանուր գործը իջաւ գերեզման. գալիս է մէկը, գնում է միւսը, յետ դառնում երրորդ այս ինչ այն ինչ պետական անձը, բերում իր հետ նոր պատուէրներ, նոր հրահանգ, նոր նախագիծ, նոր ուղղութիւն փոքր-Ա. սիւսի և Հայաստանի վերաբերմամբ, այսպէս մի կարևոր րօպէ էլ չը կայ հայոց ձայն, չը կան գործող մարդիկ որ շարունակեն աշխատել, աղերսել, պահանջել, բողոքել և ձիգ թափել քանի ու չէ, քանի որ ժամանակ է, օրինակ առնելով գոնէ կիսավայրենի աղանալի պատուիրակներից, որոնք նաև անարդար գործի համար էլ ձեռք չեն վերցնում Եւրօպայի պրեմիերների ետիւից: Մինչդեռ Կ. Պօլսի «Տոնոմոնիթը», այդ սրճատների ծաղրայի հերոսները քանի են փչում, Գամբէլեաններ ձևացնում և փամփուշտներ տրաքացնում անցեալի հաշուով, երևակայական յոյսով իրանց աւելի ևս ծանծաղաբան լրագրների էջերում. իսկ եթէ կատարում են մի մեծ բան, այդ միայն նրանով որ գրել են տալիս խեղճ—պատրիարքին մի թղթի կտոր մի որ և իցէ անցիկացի Զէյնի վրա և այդով հանգիստ կարգում և կատարած համարում սրտի ցանկութիւնը և խորհի պարտքը.... Գո վերածնունդի րօպէ տեսնել մի կողմից այսպիսի հովութիւն, դարդակութիւն, անընդունակութիւն, միւս կողմից այդչափ լաց, այդչափ յուսահատութեան արտասուք, փրկութեան աղերս և հայրենաց աչք, հէնց նրանց կողմից, որոնք կանգնած թշնամու սրբի տակ նախնաց գերեզմանների վրա օգնութիւն են խնդրում, բայց ոչ ոք չէ լսում... ողբալի հայրենիք, չարաբան ժողովուրդ....

Այն ինչ էլաւ մեր հայերի գործը, որ էսպիսի ժամանակ էլ ձայն չի դուրս գալիս—Ի՞նչ են ասում, եղբայր, հարցրի ես չը հաւատարմով լսածիս խոսութեան, միթէ դու հայ ես և ինչ է անուանում Հարցունքը առաջարկեց ինձ մի այնպիսի անձը, որին բոլոր ժամանակը համարում էի բուն լեզգի, դատելով նրա տեսքից, հագուստից, պատկերից և ձևերից: Վարչութեան մի պաշտօնեայ նշանակված էր ինձ հետ ճանապարհի ընկեր և հետաքրքիր հայը առաջնորդում էր մեզ դէպի Երևան-Չալալի ձիւնապատ բարձրավանդակը, որ ևղել է միշտ Աջարտանի անցադուռը դէպի Վրաստանի դաշտավայրը: Հէնց նրա այգման անուանը ես էրիւ-Չալալ, որ նշանակում է «ժողովրդային անցատեղի» յայտնում է արդէն նրա կատարած դերը վրաց ազգի պատմութեան մէջ: Սպայիտով ձակատագիրը անօրինեց ծանօթացնելու ինձ Աջարտանի երկրորդ ամրապատ բերանի հետ, որոնցից առաջինը՝ Յիւլիս-Չալալի, դեռ շատ դարեր պիտի պահէ իր անդունդների մէջ երեք հազար ուսուքալերի ոսկրները, որ սփռվեցին այնտեղ երկու տարի առաջ հազանդվելով հայրենաց օրէնքին, այն օրէնքին, որ պահանջում էր նրանցից մահ կամ յաղթութիւն: Բայց, աւաղ, անսուղի ժայռը, որ կազմում էր Գեղվիշ-Փա-

շալի գործը ապաստանը, երևի առաջի անգամ չէր կլանում յանդուգն թշնամեաց զուգորներ. Զուստի, նեանտի ժամանակը ևս նորան լաւ էին ճանաչում Բիւզանդացի զօրավարները, որոնցից նա կրթվեցաւ Petra—քար—անուն: Բարեբաղդաբար մօտենալով այս անգամ անհիւրընկալ Աջարիային, էլ աղատ էի այն հոգեկան աղմուկից, որին ենթակայ է լինում մարդ, երբ դիմում է մահի ճանդէպ. այս անգամ աչքիս առաջ ոչ ուր էր փայլում, ոչ մահ երևում, այս անգամ իմ հայացքը կլանում էր մի շքեղ բնութիւնը, որը տեղ տեղ յիշեցնելով Հայաստանի սարերը տանում էր գերեւակայութիւնս հեռու և հեռու.... Ի՞նչ ազգեր են այս հողերի մշակողները, հարցրի ես վրացազը պրիստաւից, տեսնելով իմ չուրջը արօրով պարապած մարդիկ:—Պաշա բոլորն էլ հայեր են, մասամբ կաթօլիկ դաւանութեամբ, պատասխանեց ընկերս:—Միթէ այս կողմերը կաթօլիկ հայեր էլ կան, հարցրի հետաքրքրութեամբ:—Ո՛ր, ինչպէս չէ, ահա կերթանք այժմ Արալ և Ուզի գիւղերը, ասեց նա, որտեղ բնակվում են միայն կաթօլիկ հայեր:—Որչափ ուրախ եմ, յայտնեցի: Երբի որտեղ իմ այս տրամադրութիւնը և լինելով ինքը Արալ գիւղից, առաջարկեց ինձ իր հարցունքը հայերի մասին մեր վերադառնալ արժեւ առաջնորդը: Նորա անունը (Յնձ) էր, նորա շարժումը և ձեւերը ասել էին տալի որ նա ստեղծված է միայն կենցաղի մէջ չէի տեսած նորա հասակի մի մարդ անչափ ճարպիկ, անչափ թեթևասլու:—Էս քրտեղից զուգոր եկաւ մի հարց հայոց գործի մասին, (Յնձ), հարցրի նորանից:—Ախ, ազգի արդաւ, ասեց (Յնձ), դու մէկ հարց ու ինձ թէ իսկի պատահում է որ իմ մտքից դուրս գայ իմ ազգի դարդը:—Ախր քեզ ի՞նչ գործ դէպի ազգ, երբ դու քո գլուխը հաղիւ ես կարողանում պահել 15 բուլլ ուռնիկով աօլիցիայի դրանը ծառայելով:—Ախ, աղաւ, հէնց էդ է որ ինձ աւելի է էրում. սիրտս լիքն է կրակով, պատրաստ եմ ամիսներ չը վերգալ ձիւց, ձի քշելիս օդից թռչուն վեր գցել և այս անօրէնների (մահմուտականների) արիւնը խմել, բայց ինչ անեմ որ տեղս չեղարձաք է, ձեռքերի կարճ....—Ի՞նչ եմ արել քեզ թուգրեղ, (Յնձ), որ այդչափ կատարած ես նոցա դէմ:—Արածը արել են, աղա, պատասխանեց նա հառաչանքով, մեր ազգի տունը նոցա են քանդել, բայց ես էլ ձեռքիցս եկածը բաց չեմ թողել. անցեալ և այս պատերազմի ժամանակը արել եմ որքան կարելի էր անել, անախտաբար լաւ դիտեմ, ասեց նա համեստ կերպով, և դարձնելով մեքենայաբար դէպի ինձ իր կողմը, որը պատած էր քաղութեան ապացուցներով, ոսկեւա և արծաթեայ մեղալններով: Առուածով վրայ, աղա, շարունակեց հերոսը, էս մեր ստամոքսիցի հայերից Հայաստան ազատող չը պիտի լինի, էլի օգնութիւնը էս կողմից պիտի հասնի, նոքա որ երաւունք ունեն ամեն բան պահանջելու, գոնեա թող աշխատէին Մուշի, Վանի և Երզրումի հայերին քիւրդերից պաշտպանելու համար սաղ Հայաստանի մէջ հէնց մի երկու

զուգոր պահել հայերից, այն ժամանակը կը տեսնէիր թէ որտեղ կը լինեմ ես ու ինձ նման դիտերը, ասեց նա առանց ինքնահաստատութեան:—Այդ գոնեղերը տէրութեան հաշուով պիտի պահվի, իսկ տէրութիւնը փող չունէ, նկատեցի նորան:—Հայհայ, բացակայեց կարծիք հեգնական ձևով, էն ինչ ազգ է որ ուզում է ոտի կանգնել և մի երկու գոնեղ չէ կարողանում պահել իրան սեփական հաշուով: Այս պատասխանը իսկապէս զարմացրեց ինձ, որովհետեւ նոյն միտքը և խորհուրդը յայտնում է ևս այժմանս պրուսական մարաշլիստ կոմս Մօլթէին իր ճանապարհորդութեան ժամանակ Հայաստանի մէջ, որ նա կատարեց 40 տարի սրանից առաջ. նորա ասելով այդ ժամանակ մեծ եպարքոս Հասան փաշայի առաջարկութեամբ օսմանեան կառավարութիւնը դիտաւորութիւն ունէր հայերից առանձին բառալիծներ կազմել Հայաստանում կարգ պահելու համար, բայց նիւթական միջոցի սղուծմանից այդ դիտաւորութիւնը չը կարողացաւ կատարվի: Եւ ես պարտաւորութիւն համարեցի հրապարակել մի յետին ռամկի միտքը, որը այդչափ բնական կերպով վրձնեց այն դժուարութիւնը որից կախված է միացել այսպեան ժամանակ տեղական ժամադրման հաստատութիւնը Հայաստանում: Անգլիական պարլամենտում մինչև անդամ միջնորդութիւնը յայտնեց նորեւում որ Հայաստանի բարեկարգութիւնը միայն դրամական միջոցներին է կարօտ: Միթէ մի ազգ որ իսկապէս ուզում է ոտի կանգնել չէ կարող համազգային հրաւեր կոչել և հաւաքել այն գուժարը, որ հարկաւոր է միանգամից գործ սկսելու համար. այն ժամանակը ոչ մեծ վիղիւրը կարող է խորշոդ պատճառներ գտնել և ոչ այժման երաշխաւոր Անգլիան և այն ժամանակ քանի հազար (Յնձ)ներ կը թափվեն աշխարհիս ամեն կողմից հայ զօրականների մէջ և կը կազմեն այդպիսով մի տեսակ հայկական կոօպուլտիւն, մի նոր քաջամարտիկ տարր: Բայց...ինչ եմ ասում, միթէ մեր ժամանակը հրաշքներ են կատարվում, միթէ հայերից մի այդպէս բան կարելի է սպասել, միթէ հայերի կոչումը ուրիշ բան է քան թէ կատարել աշխարհում միայն թշուառագոյն ազգի դերը....

Գրիգոր Նիկողոսեան

ՆԱՄՍԿ ԽՐԱԳՐՈՒՄ

Հայ թատրոնասէրների յանձնարարութեամբ, որոնք մայիսի 16-ին Թիֆլիսի Ամարային թատրոնում Ներկայացումն տուին, ուղարկելով ձեզ վերադառնալ Ներկայացումն հայեր, 150 ր. փող և օր. Պաշայեանի 212 բուլլու ստացակամը, խոնարհաբար խնդրում եմ ձեզ տպել այս հայիւր ձեր յարգելի լրագրի մօտակայ համարներից մէկում, իսկ 150 բուլլ թողնել ձեզ մօտ և գործածել օր. Պաշայեանի երաժշտական կրթութիւն ստանալու համար, վրձարելով որքան կը հարկաւորվի պ. Տրուֆֆին և Գեյրօշէին, որոնց մօտ օր. Պաշայեանը դասեր է

որին նուիրած են այս տողերը, մենք ի բաց կը թողնենք և կը վերջացնենք այս մի քանի խօսքերն ասելով Ռուսաստանի վերաբերեալ: Ռուսաստանը խաղում է մեծ դեր Եւրօպայում սերմերի առուուորով և նորա արտաքին առուուորը այդ առարկայով միշտ աճել է: Գեո. մի քառասուն տարի սրանից առաջ, Ռուսաստանի ամբողջ հունձը տալիս էր միջին թիւով 260 մլր. չեւովերտ. այդ թիւից 65 միլիօնը պահվում էր յաւուրդ տարվայ ցանքի համար, 191 միլիօն գնում էր իր սեփական գործածութեան, այնպէս որ մինչ 1840 թվականը տարեկան միայն 4,110,000 արտադրանք էին ուրիշ երկրները: Վերջի ժամանակները այդ արտաքին առուուորը շատ բարձրացաւ, այնպէս որ 1868 մինչ 1870 տարին միջին թիւով արտահանվում էր 30,516,000 հեկտոյիտր (մօտ 15 միլիօն չեւովերտ): Մենք մեր ձեռքն ունենք 1877 և 1878 թվերի միայն առաջի վեցամիսների թիւերը ցորենի առուուորի համար: Անցեալ տարվայ Ռուսաստանի ցորենի առուուորը զարմանալի բարձրացել էր, այն է միայն առաջի վեց ամիսներում դուրս էր բերված Ռուսաստանից 22,597,000 չեւովերտ. մինչդեռ 1877 թվին մի և նոյն ժամանակամիջոցում արտահանված էր միայն 14,123,000 չեւովերտ: Իսկ ինչ կը վերաբերի արժողութեանը, 1877 թվականում բոլոր ցորենէնների արտահանածները Ներկայացնում էին միայն 303,558,000 բուլլու գին: Մինչև այժմ մենք քննեցինք համապատասխան Եւրօպայի երկրագործական դրութիւնը, նորա սիւստեմները, նորա հարստութիւնները, նորա առուուորը: Այդ նկարագրութիւնը ի հարկէ լրակատար չէր, մենք չը խօսեցինք պարտիզպանութեան մասին, որը օրէցօր զարգանում է, մանաւանդ մեծ

առում: Բայց եթէ անհրաժեշտ կը համարվի մուգիլայի և երգեցողութեան վարժապետներին փոխել, այդ դէպքում դրա մասին խոնարհաբար խնդրում եմ խորհրդակցել իշխ. Մ. Պ. Բէհրու-թեանի հետ:

Հաշիւ: Մուտք. տոմսանքից և աֆիշանքից սրտացված է բոլորը 665 ր. 90 կօպէկ: (Մի և նոյն թիւի մէջ տոմսանքի արժողութեանց աւելի վրձարված է կողմնակի օթեակի համար 2 ր., № 7—3 ր., № 10—3 ր.: № 4 բազմաթիւների համար վճարված է 2 ր., № 14—2 ր., № 1 կցված աթոռի համար 12 ր., № 19—22 ր., կրկին առաջին կարգի մէկ բազմաթիւների համար 3—ր., № 35 համար 1 ր., № 36—1 ր., № 69—1 ր., № 91—1 ր., № 92—1 ր., աւելացրած աթոռի համար 50 կ., բոլորը 54 ր., 50 կ.: Միւսա. աֆիշանքի թղթի համար տուած է 4 ր. 85 կ., աֆիշանքի տպագրութեան համար—7 ր., աֆիշանքի կցցնելու—2 ր., թղթակաղի և այլ մանր ծախսերի մէջ տպված յայտարարութեան համար—2 ր. 84 կ., դերձակին շորերի համար—10 ր., վարձով վերցրած որսորդական շորի—1 ր., դաշնամուրը տա-նելու համար—5 ր., Պետրօվսկում 5 ր., «Աշնանա-ին երեկոյ» պիեսայի հեղինակական վարձատրու-թիւն—2 ր., թատրոնական ծառանքին և պ. Ֆէր-դինային վճարված է 5 ր. 40 կ., Լէլի դերը ար-տագրելու համար—90 կ., Պալմին վճարված է 250 ր.—բոլորը 297 ր. 29 կ. 90 ր. արդիւնք. 368 ր. 61 կ., որոնցից 218 ր. 61 կօպէկը վճարված է օր. Պաշայեանին, իսկ 150 ր., ինչպէս վերեւ յիշված է, թողված է նրա երաժշտական կրթութեան հա-մար:

Ն. Միլոյեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք լսում ենք որ ներկայ տարվայ յունկար և փետրվար ամիսներում զանազան քաղաքների հա-յոց ծխական դպրոցներից հաշիւներ են ուղար-կված «Մանկավարժական թերթ» ամսագրի խմբա-գրութեանը տպագրութեան համար: Բայց մինչև այժմ այդ հաշիւները տպված չեն յիշեալ ամսագրի մէջ: Ցանկալի է այդ հաշիւները տպված տեսնել:

Երբեք լսում ենք որ ներկայ տարվայ յունկար և փետրվար ամիսներում զանազան քաղաքների հա-յոց ծխական դպրոցներից հաշիւներ են ուղար-կված «Մանկավարժական թերթ» ամսագրի խմբա-գրութեանը տպագրութեան համար: Բայց մինչև այժմ այդ հաշիւները տպված չեն յիշեալ ամսագրի մէջ: Ցանկալի է այդ հաշիւները տպված տեսնել:

Քաղաքների չրվականներում և որը Ներկայացնում է երկրագործութեան ամենամեծ աստիճանը. նմանապէս լուրերում անցանք գինեգործութեան անել. սակեւ, որը մի քանի երկրներում, օրինակ Ֆրանսիայում, Ուկրաինայում երկրի մեծ հարստութիւններից մէկն է կազմում: Բայց գինեգործութիւնը նա մա-նաւանդ ծաղկած է Ֆրանսիայում, ուր երկրի հողը, կլիման և տեխնիկային գիտութիւնը միասին նպաս-տել են զարգանում Ֆրանսիայում գինեգործութեամբ այդ լաւ կը տեսնվի, եթէ իմանանք խաղողով բուսված հողը և համեմատենք նրան ցորենով բուսված հողի հետ. 53 միլիօն հեկտարի վրա, որը Ներկայացնում է Ֆրանսիայի ամբողջ գետինը, մօտ 7 միլիօն հեկտար բուսված է միայն ցորենով (այլ սերմեր չը հաշւած) իսկ որքը բուսում է մօտ 2 միլիօն 300,000 հեկտար, իսկ 1870—71 պատե-րազմից առաջ, այսինքն հաշւելով Էլզաս և Լօ-տարինգը, որքը բուսում էր 2,650,000 հեկտար: Ինչպէս որ ընթերցողը տեսնում է, դա մի շատ մեծ հող է, իսկ թէ ինչ արժողութիւն է ներկա-յացնում այդ հողը, պիտի իմացած, որ իւրա-քանչիւր հեկտարը անցեալ տարի տուեց 21 հեկտոյիտր գինի, ուրեմն ընդամենը մօտ 49 մի-լիօն հեկտոյիտր. հեկտոյիտր գինին միջին թիւով արժեանքով 48—49 ֆրանկ իր տեղումը (12 ր.), այդ ամբողջ քանակութիւնը Ներկայացնում է ու-րեմն աւելի քան 2 միլիարդ 350 միլիօն ֆրանկ: Ֆրանսիայի հետ համեմատած, միւս երկրների գի-նու առուուորը փոքր է, օրինակ Ուկրաինայի գի-նին հաշւում էին 1877-ին, որը առաւ տարի չէր, մօտ 2 միլիօն 600 հազար հեկտոյիտր:

այդ թանգութիւնից մանաւանդ պիտի վնասվեն գիւղացիները, իրանք և համարում գերդաստոնները, որովհետեւ հաստատված է, որ հասարակութեան աղքատ և միջին դասակարգերը աւելի հայ են բա-նեցնում քան հարուստները:

Գերմանիան ևս պատկանում է ցորենի ներմուծող երկրների շարքին, թէպէտ և ինքը բաւականաչափ արտահանում է ուրիշ երկրները: Ահա մի քանի թիւեր, որոնցով կարելի է ըմբռնել Գերմանիայի ցորենի առուուորի չափը: Անցեալ 1878 թվին գերմանական հողի վրա, չը հաշւած Համբուրգ և Բրեմեն քաղաքները, բայց հաշւած Լուբեք-բուրգը, հետեւեալ չարժողութիւն է եղած:

Ներմուծած	Արտահանած
Ցորեն	21,462,000 ցենտ. 15,705,000 ցենտ.
Համար	19,025,000 » 3,931,000 »
Գարի	10,098,000 » 4,347,000 »
Վարակ	5,856,000 » 2,701,000 »
Գետնական	632,000 » 7,049,000 »
Ալիւր և ա-լիւրեղէններ	4,746,000 » 4,141,000 »

Բերենք այստեղ նաև մի քանի այլ թիւեր որոնք ցոյց են տալիս, թէ որքան է արդիւնաբե-րում Գերմանիան ինքը:

Ցորեն	66,352,000 ցենտներ
Համար	148,559,000 »
Գարի	49,716,000 »
Վարակ	109,615,000 »
Գետնա-կան	501,806,000 »

Ուրեմն եթէ ի նկատի առնենք այդ երկու վերեւ ընդած թիւերը, կը գտնենք, որ Գերմանիան գործ է

ածում իւրաքանչիւր տարի ցորենի աւելի քան 72 միլիօն ցենտներ, չափը 163 1/2 միլիօն. այս երկու առարկաները ծառայում են ազգաբնակչութեան իւրեւ անմիջական կերպով: Գարին գարեջուրի տեսա-կով, գետնականները որպէս օղի, իսկ վարակը, որի մեծ մասը ձիւրին է ծառայում, սպառված է այն տարում 112 1/2 միլիօնից աւել:

Այս թիւերից տեսնում էք արդէն, որ Գերմանիան աւելի է սպառում քան արդիւնաբերում: Մի երկու տասնեակ տարիներ սրանից առաջ այն հակառակն էր, 60 թվականներից սկսած ներմուծումը միշտ աւելանում է և դուրս պատճառները մի և նոյնն են, ինչ միւս երկրներում: Գերմանիայի համար ցորենի գալիս է գլխաւորապէս երկու տեղերից՝ Ռուսաստանից և Աւստրո-Ունգարիայից: Սկսած 1872 թվից մինչ 1876 Ռուսաստանն էր ամենից շատ ներմուծում, իսկ 1877 թվին Աւստրիան:

Միւս տէրութիւնների մի առ մի քննելը աւե-րորդ է, միայն այսքանը կասենք, որ օրինակ 1878 թվին, Եւրօպայի համար հարկաւոր էր ներմուծել մօտ 60 միլիօն հեկտոյիտր ցորեն պակասորդը ը-րացնելու համար, մենք վերեւ տեսանք որ այդ թիւի մէջ Անգլիան մասնակցում է 36—36 միլիօ-նով, Ֆրանսիային 16—17 միլլ., Գերմանիան, Հօլ-լանդիան, Զուլիգէրիան և Իտալիան միասին 10 միլլ.: Այդ կարծիքը լրացնելու համար Ներկայացնում են իւրեւ ամենազգաւոր երկրների՝ Հիւսիսային Միացեալ Նահանգները և Ռուսաստան, բայց նաև Ուկրաինա, Գալիսիա և այլ երկրներ (Թիւրքիա, Եգիպտոս, Աւստրալիա, Հնդկաստան, Պարսկաս-տան, Չին, Կամպոլա):

Միացեալ Նահանգները, չը լինելով Եւրօպա,

հետևանք բովանդակութեան յայտարարութիւն.
«Просить почтеннѣйшую публику не выражать
своего восторга ломаніемъ кресель и стульевъ.»

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Կրգիւնները Յունաստանի վերաբերութեամբ մի քանի հետաքրքիր ու նշանաւոր տեղեկութիւններ են հաղորդում: Արծեմ մեր ընթերցողները կը յիշեն, որ Թիւրքիայի և Յունաստանի մէջ սահմանները կարգադրութեան համար բանադնացութիւններ էին սկսել: Բայց որովհետեւ այսքան ժամանակ ղեռն այդ բանադնացութիւնները ոչինչ վճռական եզրակացութեան չը հասան, ուստի Վաղդինգտոն երկրորդ անգամ մի առանձին շրջաբերականով ղիմեց օտար պետութիւններին, առաջարկելով, որ այս վերջինները համոզեն Բ. Կրան որ նա շարունակէ Պրէզիտայի ընդհանուր բանադնացութիւնները, և կամ համաձայնեալ տայ եւրօպական զեպականներին եթէ ոչ պաշտօնապէս, զոնէ կիսապաշտօնական ձևով ժողով կազմել և անուղղակի ձևով օգնել հարցին վերջնական վճիռ տալուն:

Ասում են, որ Յունաստանի այս նոր առաջարկութիւնը հաւանութիւն գտաւ Գերմանիայի, Ռուսաստանի և Աւստրիայի կողմից: Այդ երկիրները արդէն պատրաստել են իրանց համաձայնութեան պատասխանը, և շուտով Փարիզ կուղարկեն:

Աթէնքից հաղորդում են «Indép. Belge» լրագրին, որ Յունաստանի արեւելեան սահմանագիծը յունական զօրքերի պիտուի հրամանատարը հեռագրել է Աթէնք, որ Թիւրքաց 500 զինւորներ, 125 մարդուց բաղկացած, հաստատ չը գիտեն աւագանների թէ այսպէս տամբներ մի խումբ հարձակելով, մասն յունական սահմանադուրը:

Հաստատ աղբիւրներից տեղեկացնում են, որ հայաբնակ խմբին առաջնորդում են Զուլթանի և Գարիսի բաշերը:

Յունական սահմանադիր մի քանի զօրախմբեր հրացանի ձայնը լսելով պատրաստ վում էին ապստամբներին յետ մղելու, երբ ապստամբներն իրանք իրաւացի կերպով նախաձեռնելով սպառնացող վտանգը, յետ քաշվե-

ցան, և խոյս տալով Թիւրքաց զօրքերից, կրկին մասն նրանց հողը: Իսկ Թիւրք զօրքերը կարծելով, որ նրանք չը վերադարձան, և չը նայելով յունական զօրքերի բացատրութեանը, թէ ապստամբները յետ փախան, նրանք այնու ամենայնիւ սկսեցին շարունակել առաջ գնալ յունական հողերով: Յունական կանոնաւոր զօրքերը նրանց ստիպեցին վերադառնալ, բայց երբ Թիւրքերը չը կամեցան, յունական զօրքերը ընդհանուր կանոնադրութեան համաձայն սկսեցին պաշտպանվել զէնքով:

Երկու հակառակ բանակներն էլ երեք անգամ ձակաւոր ձակաւոր կանգնեցին, երեք անգամ էլ յոյները յաղթող հանդիսացան, և յաջողեցին Թիւրքիայի զօրքերին սահմանից դուրս քշել:

Թիւրքերը բաւական մարդիկ կորցնելուց յետոյ ստիպվեցան յետ քաշվել:

ԱՆՍՏՐՈՒՆԳԱՐԻԱ

«Մշակի» նախընթաց համարների մէկի մէջ ասացինք, որ Յունաց-Յուլիէի կայսրը հրամայեց, որ ամբողջապէս սկսեն նոր ընտրութիւնները: Այդ հարցը այժմ ամենքի բերնում վիճաբանութեան առարկայ է դարձել: Գուրը կը տեսնէք լրագրների ամբողջ էջեր լցված միայն այդ առարկային վերաբերեալ գրուածքներով: Ազատամիտները պաշտպանում են ազատամիտներին, յետադէմները — յետադէմներին, սահմանադրականները — սահմանադրականներին, և այսպէս շարունակ:

Բոլոր ներկայ յուզմունքների մէջ աչքի ընկնող միայն մի բան է նշմարելու, այն է որ կառավարութիւնը այդ բանում հսկայական քայլեր է անում: Նա ընտրել է տալի կառավարութեան ջերմ պաշտպաններին: Այս խաղը նոր խաղ է: Դա հին, գրեթէ պատմական խաղ է: Պղտոր ջրում ձուկ որսալ, դա շատ պետութիւնների սխալման է եղել, և այդպէս էլ կը լինի միշտ: Տեսնենք թէ ազատամիտները ինչպէս դրժ կը դնեն իրանց ազատամիտութիւնը, բայց երեւի դրանք էլ շատ բան չը պէտք է կարողանան անել, որովհետեւ «Neue freie Presse» լրագիրը շատ իրաւացի կերպով ասում է, որ նրանց մէջ միութիւն չը կայ: Մի և նոյն լրագիրը երկու է յայտնում, թէ մի գուցէ թուլացնելով ազատամիտների ոյժը, կառավարութիւնը մի շատ ողորմելի ժողով տայ Աւստրիային, բացի այդ,

նա ցաւ է յայտնում, որ վերին Աւստրիայում յաջողութիւնը զգալի կերպով անցնում է կրեակնանների կողմը, և ժողովի ներկայ անգամներին շատերը վտանգ կայ, որ այլ ևս չընտրվեն: Եթէ այս բոլորը այսպէս կը լինի միւս կուսակցութեան պատկանող անձինքներին կը մնայ միայն խոստովանել կառավարութեան մաքալվելական յաղթութիւնը, և գլուխը ծռած հպատակել եղած կարգադրութիւններին:

Աւստրո-Ունգարիայում բացի ընտրութիւնները, մի ուրիշ քայլ էլ արին. Բոսնիայի և Հերցեգովինայի համար, որի զխաւոր կառավարիչ է նշանակված Ֆրիանսների մինիստր բարոն Հոֆման, այս օրերս մի կանոնադրութիւն հաստատեցին: Օրէնքը զխաւորապէս հիմնված է Աւստրիայի զինուորական օրէնքների վրա, բայց և այնպէս այդ կանոնադրութիւնը նշանակութիւն է տուած տեղային մուսուլմանական աւանդութիւններին, ծէսերին ու սովորութիւններին:

Կառավարիչ մինիստրը շուտով կը հրատարակի այդ կանոնադրութիւնը, և կը հսկի նրա մէջ յայտնված կանոնների խիստ զործարդութեան վրա:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրներից մէկը հաղորդում է Ալէքս-փաշայի խօսքերը, որ նա ասել է սուլթանին այն նպատակով, որ դրան բարեկամացնէ Ռուսաստանի հետ. «ձեր մեծութիւն, ասել է Ալէքս-փաշա, երբ 1833 թուական Մահմէդ-Ալին որդի Խրախիմ-փաշա Կոնստանդնուպոլիսում ծնունդ առաւ, ես իմ հայրը այն ժամանակ խորհուրդ տուեց ձեր պապ Մահմէդ երկրորդին Ռուսաստանից օգնութիւն խնդրել: Սուլթանը խնդրեց համեմատ ուստաց նաւատորմը երեքս Բոսֆորի մէջ և զօրքերը ափ հանել: Երկու ամիս յետոյ Խրախիմ-փաշա հեռացաւ Փոքր-Ասիայից, իսկ ուսումները թողին Թիւրքաց հողը և այդպիսով Թիւրքիան ազատեցաւ: Ինչ կը վերաբերի եւրօպացիներին, նոքա ոչինչ չարին ձեր նախաօրը օգնելու համար»: Արդու-Համիդի վրա այդ յիշողութիւնը շատ լաւ տպաւորութիւն գործեց:

«ՄԵԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑՈՅ

ԱՊՐԱՅԻՆ, յունիսի 1-ին: Պատիւական վեճակից սկսած, ամբողջ վերին և ստորին Ա-

արշաւներ. ոչխարը փոքրագոյն կենդանի է արջաւոր, ուստի նորա վաճառելը աւելի հեշտ է քան միւսը. անկիրթ կամ կիսակիրթ երկիրներում առ հասարակ լուսաւոր երկրներից սակաւագոյն հարստութիւններ կան, ուստի սակաւ են նա և այնպիսի տնտեսներ, որոնք իրանց հարստութիւնները մարմնացնելիս արջաւորին կենդանիների մէջ, որոնց համար հարկաւոր է երկար խնամքներ և երկար տարիներ նոցա հաստատութեան բերելու համար: Այս մեկնութիւնից ուրեմն հասկանալի կը լինի ընթերցողին, թէ ինչու որքան ստոր է մի աղք լուսաւորութեամբ, անքան նորա մէջ աւելի են ոչխարներ քան եզներ, ուրեմն և ինչու այդպիսի երկիրներում ոչխարի միւսը աւելի զործածական է քան արջաւորը: Այդ հանգամանքը կարող է նաև իբրև բացատրութիւն ծառայել թէ ինչու չէ կարելի պահանջել մեր հայկական անասնապահութիւնից մեծամեծ քայլեր անել զէպ յառաջ և նմանել ամենայն կողմանէ եւրօպական օրինակելի անասնապահութեան: Որքան մի երկիր կառավարանայ, այնքան պիտի բարձրանայ նորա երկրագործութիւնը, իսկ սորա հետ սերտ կապված է անասնապահութիւնը, որովհետեւ, ի միջի այլոց, անասունի համար հարկաւոր խոտը այնքան աւելի կը տայ մեր հողը, որքան նա մշակված է: Եւրօպացիում շատ տեղերում ընդունված բերքափոխ * անտեսութիւնը այնքան արդիւնք է տալիս, որ խաչիցների համար առանձին և մշտական արօտատեղի չեն պահում, այլ և այդ մանաւանդ

*) Այդ բառով ցանկանում ենք յայտնել երկրագործ այն եղանակը, որով խաղաղանկար տարի մի և նոյն հողի վրա ցանքը փոխում են, մի շրջանում ցորեն, միւսում մի այլ սերմ են ցանում:

Ջարիայի մահմետական վրացի ազգորնակութիւնը գաղթում է դէպի Հայաստան: Գաղթողների թիւը Վաթիւն հազար ընտանիքից աւելի է: Նրանց համար նշանակված են հողեր երգրումի, վանի և Գիարբէքերի վիլայէթներում, որտեղ առանձին յանձնաժողով են սպասում նրանց ղետեղելու համար: Նստերը արդէն ձանապարհ են ընկել դէպի իրանց նոր բնակութեան տեղը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ՓԱՐԻՉ, 31 մայիսի, (12 յունիսի) Վիէննայից ստացված տեղեկութիւններին նայելով, բոլոր պետութիւնները ընդունել են Ռուսաստանի այն առաջարկութիւնը, որով արեւելեան Բալկանյի յանձնաժողովի իրաւունքները հետեւալ կերպով են որոշվում: Երկրագործութեան պէտք է հսկի օրգանական կանոնադրութեան փոփոխութիւններին, և պէտք է կանխապէս յայտնէ իր կարծիքը բոլոր այն հարցերի վերաբերութեամբ, որոնք կապ կունենան կանոնադրութեան հետ: Նահանգապետը առանց յանձնաժողովի համաձայնութեան իրաւունք չը պէտք է ունենայ կանչել Թիւրքաց զօրքերին: Այն վճիռները, որոնք կընդունվեն յանձնաժողովից ձայների անպայման առաւելութեամբ: Նահանգապետի համար պարտաւորեցուցիչ պէտք է համարվեն աստիճանադրների ընտրութիւնը պէտք է նահանգապետի պատասխանատվութեան ներքոյ լինի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 յունիսի: Բուլղարական Եանկոյով և Գէշով պատգամաւորները հասան այստեղ: Նրանք արդէն ներկայացան Գօրապօվին և Գիւրիսին: Նրանք իրանց եւրօպական ձանապարհորդութիւնից զոհ են մնացել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի: Պօթոլսիի նահանգապետը հրաման է տուել վարի Կօվէնսկի նահանգապետութեան պաշտօնը: Մաքսային և զանազան ուրիշ հարկերից մաս յիսի 3-ից սկսած 5 ամսվայ համար ստացված է 26,205,543 ռուբլ թղթադրամ: Երկրի մէջ մտել է 5,410,746 ռուբլ ոսկի և արծաթ: արտահանված է 2,745,521 ռուբլ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 87 կ., երկրորդ 92 ռ. 25 կ., երրորդ 95 ռ., չորրորդ 95 ռ. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 242 ռ., երկրորդ 238 ռ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. 87 կ., երկրորդ 93 ռ., ոսկի 8 ռ. 46 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23,56 պէնս. Ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 201 մարկ 50 պֆ. Փարիզի վրա 248 Ֆր. 50 սանտիմ: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-Հրատարակող ԳԻՒԳՈՒ ԱՐԾՐՈՒՆԻ

ձմեռը, նոցա կերակրում են ախտներում քանի որ երկրագործական այլ եղանակներով հարկաւոր է խաչների համար մշտական արօտատեղ: Նմանապէս և ձմեռը, ուր նոքա յաճախ հիւանդութիւնների և վատ եղանակների զոհ կարող են լինել: Եւ ոչ թէ միայն այդ եղանակով հողը աւելի խոտ է տալիս, ուրեմն և մի և նոյն կողմը հողի վրա աւելի կենդանիներ կերակրում, այլ, ինչպէս որ վերեւ մենք տեսանք, կենդանիներ աւելի մեծանում է և աւելի միս տալիս: Անասնապահութեան կուլտուրային զարգացման աստիճանները կարող է մարդ նորա արդիւնքի տեսակով զանազանել: արդէն մի քայլ դէպ առաջ պիտի ընդունել, երբ սկսում են իւր և պանի պատրաստել: մի քայլ եւ արած, անասունից պատրաստում են աւելի մնացու: Բայց անասնապահութիւնը հասնում է իր վերի կէտին, երբ կաթը սկսում է աւելի մեծ դեր խաղալ, որովհետեւ այս վերջնալ կարող է շատ զարգանալ երբ մեծ և կենտրոնացած ժողովուրդ կայ, ուրեմն քաղաքների մօտ և որովհետեւ կաթը այն առարկաներից է, որ դժուար է հեռու երկրների տեղափոխել, ուստի նորան պիտի նոյն իսկ երկրում պատրաստել: Այն յայտնի է նմանապէս, որ կաթը բոլոր միւս բերքերից ամենից աւելի շահաւետ պիտի լինի: հաշուում են, որ երբ իւղագործութիւնը տալիս է 189 ֆունտ ստերլինգ դուս օգուտ, մագործութիւնը տալիս է 215, իսկ կաթնագործութիւնը 304 ֆունտ ստերլինգ: Չանազանութիւնը, որպէս տեսնում էք, ահապէս է:

(Կը շարունակվի)

*) շին կտակարանը յունեանով մեր ձեռքին, ընթերցողը կը գտնէ այդ տեղը, որտեղ խօսվում է Թակօրի որդեկրանց մասին, որոնք տալով իրանց խաչների զանազան գոյների և ծառերի տերեւներ ու խոտերը նկատել էին, որ դոցա հարմար փոխվում են և զանաքի գոյները, բոլորը և այլն:

Типографія А. А. Михельсона